

**Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(25 հունվարի 2004 թ.)**

*«Որ հաաարայ ի Նա՝ ոչ դարապարտեսցի,
և որ ոչ հաաարայ ի Նա՝ արդէն իսկ դարապարտեալ է,
զի ոչ հաաարաց յսնուն ճիւղմնի Որդոյն Աստուծոյ»:
(Նովհ. Գ 18)*

«Յանուն Նոր եւ Որդոյ եւ Տոբոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի՛ հավաքացյալ քույրեր և եղբայրներ,

Որպես մեր խոսքի բնաբան՝ ընտրված այս հարվածում Նովհաննես ավերարանիչը ներկայացնում է այն դրվագը, երբ զրույցի են բռնվում հրեա ազգի հմուտ կրոնագետ Ժաբբի Նիկողեմոսը և համայն մարդկության Տեր և Փրկիչ Նիսուս Բրիսարոս:

Նիկողեմոս փարիսեցին պարզ հետաքրքրությամբ չէ, որ գաղտնի եկել էր Նիսուսի մոտ: Նա հստակ գիտեր ու փեսել էր Նրա բազում վերերկրային հրաշագործությունները և լսել էր Տիրոջ կենդանարար խոսքն ու քարոզը: Թեպետ նա իմաստուն էր համարվում, բայց ժամանակի կեղծ ու սխալ համոզումները պաշարել էին իր հոգին, ուստի և հասկանալի էր իր զարմանքը և հասկանալի էր իր հարցումների պարզառը: Բրիսարոս ընդհանրապես որևէ մեկին փեսնելով և խոսելով՝ փեսնում էր նաև նրա ներքին հուզումները: Այսպեղ Փրկիչը խոսքը սկսում է հետևյալ բառերով. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը փեսնել» (Նովհ. Գ 3):

Բրիսարոս, Իր խոսքը շարունակելով, խոսում է համամարդկային փրկագործության մասին. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ որպեսզի աշխարհը նրանով փրկվի» (Նովհ. Գ 16-17):

Անշուշտ, սիրելի բարեպաշտ հայորդիք, Բրիսարոս գիտեր, որ այս ամենը դյուրին չէ հասկանալ ու ընկալել, և այսօր էլ շարերս փարակուսանքի մեջ ենք ընկնում: Ուստի պարահական չէ, որ Բրիսարոս փրկագործության վարդապետությունը ներկայացնելիս շեշտում է մկրտության կարևորությունը, թե ոչ որ չի կարող Աստծո արքայությունը փեսնել առանց վերստին ծնվելու՝ մկրտվելու: Նույնպես առանց այս սրբազան խորհրդի դժվար կլինի ընկալել և ընդունել փրկագործության խորհուրդը: Նենց այս համոզմամբ է, որ մեր Եկեղեցին առավելաբար ընդունում է մանկամկրտությունը:

Այսպիսով, մկրտության անճառելի խորհրդով զրահավորվում ենք՝ պատերազմելու ընդդեմ բանասարկուի, և երկնային շնորհի ստանում՝ ըմբռնելու և ընդունելու աստվածային խորհուրդները:

Մի քանի օր է անցել մեր Փրկչի հրաշափառ ծնունդից ու մկրտությունից: Այդ օրը մենք էլ վերստին ծնունդ առանք և մկրտվեցինք՝ ի բարենորոգություն անձանց մերոց: Այսօր երկրորդ կիրակին է «զկնի ծննդեան», և այսօր մեր Եկեղեցու երանաշնորհ հայրերը, որպես ճաշու ավերարանական ընթերցվածք, ներկայացնում են այս հապվածը: Այսինքն՝ Քրիստոսի Աստվածհայրնությամբ մենք կրկին մաքրելով մեր հոգիների փիղմը՝ վերստին հնարավորություն ենք ստանում նոր հոգով, նոր գիտակցությամբ և նոր կենցաղավարությամբ ըմբռնվելու: Աստված սերը, ողորմությունը, ապավինել կարենցող Աջին, որոնցով ի լույսն ամենայնի կարծանանքը Աստված սիրո մեծագույն արտահայտությանը՝ հավիտենական կյանքի և հոգևոր ու նյութական փրկության և խաղաղության:

Միրելիներ, փարին նոր է սկսվել, նոր հույսեր և նոր նպատակներ ունենք: Նոր ենք նշել մեր Տեր և Փրկիչ Նիսուս Քրիստոսի Աստվածհայրության մեծագույն փաղափար փոքր, աղոթքով ու բաղձանքով լցվենք անսպառ ու անմաքույց հավատքով, որն Ինքը՝ Քրիստոս լույսի է նմանեցնում. ինչպես որ լույսին մոտեցողը լուսավորվում է, իսկ լույսից հեռացողը՝ խավարի մեջ մնում, նույնպես և Քրիստոսին հավատացողը կփրկվի, իսկ Քրիստոսի հավատքից հեռու մնացողը կդատապարտվի: Քրիստոս լույս է, և նրա ծննդյամբ լույս ծագեց աշխարհի վրա, բայց, ավա՜ղ, մարդիկ խավարը սիրելով՝ փախչում են կենսաբաժնի Լույսից: Ով բարություն է գործում, չի վախենում լույսից, իսկ ով հակառակը՝ վախենում է լույսից՝ սիրում է խավարը, որպեսզի չհայրնվեն իր գործերը (Կեն Նովի. Գ 19-21):

Միրելի՛ հավատացյալներ ի Քրիստոս, հայցելով Տիրոջ ամենառապր ողորմությունը, լցվենք անսպառ սիրով ու հավատով առ Քրիստոս, բանգի գիտենք. «Ով նրան հավատում է, չափի դատապարտվի, և ով նրան չի հավատում, արդեն իսկ դատապարտված է, քանի որ Աստված միածին Որդու անվանը չհավատաց» (Նովի. Գ 18):

Թող Տերն օրհնի ձեզ ամենբիղ, որ երբեք ու երբեք չպակասի ձեր մեջ եղած հավատքը, և ջրացնենք դատապարտվածների շարքերը:

«Ընտրիք, սէր և անհարմուր հաւարք եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեւանդ Ամեն»: